ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԿԱՊԻՏԱԼԻ ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԿՈՆՖԻԴԵՆՑԻԱԼ, ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ»

Բելառուսի Հանրապետության կառավարությունը և Բելառուսի Հանրապետության ազգային բանկը, Ղազախստանի Հանրապետության կառավարությունը և Ղազախստանի Հանրապետության ազգային բանկը, Ղրղզստանի Հանրապետության կառավարությունը և Ղրղզստանի Հանրապետության ազգային բանկը, Ռուսաստանի Դաշնության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկը՝ մի կողմից, և Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ մյուս կողմից,

ղեկավարվելով 2014 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 1-ին հոդվածի 4-րդ պարբերությամբ,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը միանում է «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ կոնֆիդենցիալ, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու օրվանից, սակայն «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ կոնֆիդենցիալ, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2018 թ. հունիսի 18-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, լինելով սույն արձանագրության ավանդապահը, Եվրասիական տնտեսական միության յուրաքանչյուր անդամ պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից	**Բելառուսի Հանրապետության ազգային բանկի կողմից**
Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից	**Ղազախստանի Հանրապետության ազգային բանկի կողմից**
Ղրղզստանի Հանրապետության Կառավարության կողմից	**Ղրղզստանի Հանրապետության ազգային բանկի կողմից**
Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից	**Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի կողմից**
Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից	**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018 թվականի հունիսի 18-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝ «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ կոնֆիդենցիալ, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն